



***"Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ունիվերսալ վարկային
կազմակերպություն առևտրային կոոպերատիվ***

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024 Թ ।
ԿԻՍԱՄՅԱԿ**

"Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ունիվերսալ վարկային կազմակերպությունն առևտրային կոոպերատիվը (այսուհետ՝ ՎԿ) գրանցվել է 2007թ.-ի սեպտեմբերի 18-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (լիցենզիա թիվ 20): Կազմակերպությունը հանդիսանում է առաջին կոոպերատիվ վարկային կազմակերպությունը և միակն է իր տեսակի մեջ Հայաստանում:

Կազմակերպության առաքելությունն է՝ բարելավել կյանքի որակը Հայաստանի Հանրապետության գյուղերում՝ մատուցելով կոոպերատիվ սկզբունքների վրա հիմնված մատչելի ֆինանսավարկային ծառայություններ:

Կազմակերպության տեսլականն է՝ ՀՀ-ում գյուղատնտեսական վարկային ներդրումներով լինել առաջատարը վարկային կազմակերպությունների մեջ՝ հաճախորդներին մատուցելով նախընտրելի ծառայություններ:

ՎԿ-ն իր առաքելությունն իրականացնելու համար սահմանել է **նպատակներ**, ինչպես նաև դրանց հասնելու համար ռազմավարություններ և անհրաժեշտ ցուցանիշներ:

Կազմակերպության նպատակներն են՝

1. Կայուն կենսունակության ապահովում

Ռազմավարություն՝

- ✓ Ֆինանսավորման կարողությունների ավելացում՝ լրացուցիչ կապիտալ/վարկեր/այլ ֆինանսավորում ներգրավելու միջոցով,
- ✓ Ապահովել շահութաբերություն՝ ՎԿ գործառնություններում արդյունավետ գնագոյացում կիրառելու միջոցով
- ✓ Ապահովել արդյունավետ մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականություն, կիրառելով գործիքներ և ընթացակարգեր (բոնուսային համակարգ, մասնագիտական աճի ապահովում, խրախուսման այլ մեթոդներ և այլն);
- ✓ Վարկային պորտֆելի որակի վերահսկում
- ✓ Ապահովել ռիսկերի մակարդակը ՎԿ Դիտորդ Խորհուրդի կողմից հաստատված Ռիսկի ախորժակի շրջանակներում

**2. Ֆինանսական շուկայում ակտիվ գործունեության իրականացում
Ռազմավարություն՝**

- ✓ Հայաստանի բոլոր գյուղական շրջաններում նոր մասնաճյուղերի բացում/վարկավորում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ
- ✓ Յուրաքանչյուր նոր տարածաշրջանում նոր անդամ-փայատերերի և խորհրդի անդամների ներգրավում
- ✓ Նոր վարկատեսակների և ֆինանսական ծառայությունների ստեղծում՝ ֆերմերների սպասումներն ամբողջովին բավարարելու համար

**3. Հայաստանում, վարկային կազմակերպությունների մեջ՝ լինել
գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ֆինանսավորման շուկայի
առաջատար
Ռազմավարություն՝**

- ✓ Գերազանց վարկանիշի ստեղծում
- ✓ Վարկային կազմակերպությունների շարքում լինել առաջատարը՝ ֆերմերներին և ագրոբիզնեսով զբաղվող կազմակերպություններին ֆինանսական ծառայությունների և վարկատեսակների ներկայացման գործում
- ✓ Լինել ճկուն ՎԿ անդամ և ոչ-անդամ հանդիսացող հաճախորդներին ծառայությունների մատուցման հարցում:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Երևանում, Թբիլիսյան խճղ.՝ 9/16 հասցեում:


ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ, 2023թ. դեկտեմբերի 31-ի հետ համեմատությամբ)

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու ֆինանսական տարում նախորդ տարվա վերջի համեմատ ՎԿ-ի ակտիվները աճել են **934,800 հազ. ՀՀ դրամով** կամ **5.99%-ով**՝ կազմելով **16,539,769 հազ. ՀՀ դրամ**:


2021-06.2024թթ. ՎԿ-ի ակտիվների աճը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



Վարկային պորտֆելի փոփոխության դինամիկա

Հաշվետու ֆինանսական տարում նախորդ տարվա վերջի համեմատ ՎԿ-ի վարկային և լիզինգային պորտֆելը աճել է **1,091,108 հազ. ՀՀ դրամով** կամ **8.26 %-ով**՝ կազմելով **14,298,706 հազ. ՀՀ դրամ**:


2021-06.2024թթ. ՎԿ-ի պորտֆելի փոփոխությունը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ֆինանսական տարում նախորդ տարվա վերջի համեմատ ՎԿ-ի պարտավորությունները աճել են **836,413 հազ. ՀՀ դրամով** կամ **6.3%-ով**՝ կազմելով **14,048,157 հազ. ՀՀ դրամ**:


2021-06.2024թթ. ՎԿ-ի պարտավորության փոփոխման դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



ԿԱՊԻՏԱԼ


ՎԿ կապիտալի աճը հաշվետու տարվա դրությամբ կազմել է **98,387 հազար ՀՀ դրամ**:
Աճը կազմել է՝ **4.11 %**:

2021-06.2024թթ. ՎԿ-ի կապիտալի փոփոխության դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



Շահույթ

Հաշվետու կիսամյակի արդյունքներով ՎԿ ֆինանսական շահույթը հարկումից հետո կազմել է **132,980 հազար ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով **47,274 հազար ՀՀ դրամով** կամ **55.15 %-ով**:




ՎԿ շահութաբերության ցուցանիշները 06/2024 թ-ի դրությամբ.

- **ROA`** ակտիվների շահութաբերություն` 0.8%
- **ROE`** կապիտալի շահութաբերություն` 5.6%

Ակտիվների կառուցվածքը

Ինչպես և նախորդ տարիներին, ՎԿ ակտիվների կազմում գերակշռող մասնաբաժին ունեն հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են հաջորդ բաժնում:


Ակտիվների կառուցվածքը (30.06.2024թ-ի դրությամբ)



Վարկային պորտֆելի բաշխումը ըստ ոլորտների


ՎԿ վարկային պորտֆելի ավելի քան 77 %-ը կազմում են գյուղատնտեսական վարկերը: Պորտֆելի ավելի քան 10%-ը կազմում են Էներգաարդյունավետ վերանորոգման ուղղված վարկերը:

Պորտֆել ըստ ոլորտների



ՎԿ պարտավորությունների կառուցվածքը

ՎԿ պարտավորությունների ավելի քան 85 %-ը կազմում են գործընկեր հանդիսացող կազմակերպությունների կողմից ներգրավված վարկեր և փոխառությունները: Պարտավորությունների կառուցվածքը 30.06.2024թ-ի դրությամբ ներկայացվում է ստորև.



ԴԻՔԸ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ (41 ընկերություն)

	30.06.2024
ԱԿՏԻՎՆԵՐ	9
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԴԻՏԱԼ	16
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ	17

ՇԱՅՈՒՅԹ	25
ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	9
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	5

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **2024թ-ի մայիսի 2-ին** տեղի ունեցավ "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈւՎԿ ԱԿ-ի "Վեդի" մասնաճյուղի բացումը: Մասնաճյուղը կգործի ՀՀ, Արարատի մարզ, համայնք Վեդի, ք. Վեդի, Արարատյան փողոց 41/3 հասցեում: Նորաբաց մասնաճյուղն իր հաճախորդներին է առաջարկում Ֆարմ Կրեդիտի մատուցած ծառայությունների ողջ փաթեթը՝ գյուղատնտեսական, ագրոբիզնեսի, ՓՄՁ վարկեր և լիզինգ:
- **2024թ-ի մայիսի 2-ին**, "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈւՎԿ ԱԿ-ն իրականացրել է դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում: Որպես պարտատոմսերի տեղաբաշխող հանդես է եկել «Դայմենշն» ՓԲԸ-ն: Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով՝ 5 օրերի ընթացքում: Թողարկվող դրամային պարտատոմսերի էական պայմանները.

Դասը	Անվանական արժեկտրոնային
Անվանական արժեքը	100,000 ՀՀ դրամ
Ընդհանուր ծավալը	1,200,000,000 ՀՀ դրամ
Շրջանառության ժամկետը	30 ամիս
Արժեկտրոնային տոկոսադրույքը	12.25%

Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Եռամսյակային
---	--------------

- ՎԿ Ընդհանուր ժողովի **2024թ. հունիսի 28-ի** որոշմամբ կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է 85,495,000 ՀՀ դրամի չափով և կազմել է 1,455,857,332.50 ՀՀ դրամ:

ԿԱՐԴՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարձր որակավորում ունեցող մասնագետները ՎԿ-ի համար հանդիսանում են հաջողության գրավականներից մեկը և արտացոլում են ՎԿ չափանիշներն ու արժեքները:

Ելնելով վերը նշված սկզբունքից՝ հաշվետու տարվա ընթացքում ՎԿ աշխատակիցները մասնակցել են մի շարք մասնագիտական, որակավորման բարձրացման դասընթացների և սեմինարների:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ աշխատակիցների թիվը կազմել է 76 մարդ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՎԿ գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: ՎԿ նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների ընդունելի հավասարակշռության և նվազագույնի հասցնել ՎԿ ֆինանսական վիճակի վրա ռիսկերի անցանկալի ազդեցությունները:

ՎԿ-ն կարևորում է ռիսկերը: ՎԿ գործունեության ընթացքում ծագում են հետևյալ էական ռիսկերը՝

- ☐ Վարկային ռիսկ,
- ☐ Իրացվելիության ռիսկ,
- ☐ Շուկայական ռիսկ,

□ **Գործառնական ռիսկ:**

Ռիսկերի պատշաճ մակարդակով կառավարման համար պատասխանատու է ՎԿ ղեկավարությունը: Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարումը իրականացվում է Ֆինանսական բաժնի կողմից:

Վարկային ռիսկ

ՎԿ գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու/ոչ պատշաճ կատարելու հետ, որը կորուստներ կարող է պատճառել:

Վարկային ռիսկը ՎԿ Էական ռիսկն է, այդ պատճառով Էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում:

Վարկային ռիսկի ամենօրյա կառավարումն իրականացվում է ՎԿ ռիսկերի գնահատման բաժնի կողմից: Վարկային ռիսկի կառավարումը իրականացվում է վարկառուների գործունեության ընթացիկ մոնիթորինգի և պարբերաբար իրականացվող վերլուծությունների միջոցով:

ՎԿ-ն իր վարկային ռիսկը զսպելու նպատակով սահմանում է վարկերի առավելագույն սահմանաչափեր և կիրառում է այլ մեխանիզմներ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ստանձնած պարտավորությունները չկատարելու հավանականությունն է, ինչի առաջացման պատճառ է հանդիսանում ՎԿ դրամական հոսքերի ժամկետային անհամապատասխանությունը և/կամ բավարար ծավալով իրացվելի ակտիվների բացակայությունը: Կազմակերպությունը իրացվելիության ռիսկը կառավարում է դրամական հոսքերի կառավարման և բարձր իրացվելի ակտիվներում ներդրումներ կատարելու միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը հանդիսանում է շուկայական ռիսկի տարատեսակ և իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով վնաս կրելու ռիսկը: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով ՎԿ-ն ձգտում է համապատասխանեցնել իր տեղաբաշխված և ներգրավված միջոցների

մարումների ժամկետները, ինչպես նաև համապատասխանեցնել ֆիքսված և լողացող տոկոսադրույքների ժամկետայնության ճեղքվածքը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է: Արտարժույթային ռիսկի զսպման նպատակով ՎԿ-ն որդեգրել է արտարժույթային ռիսկը հեջավորելու քաղաքականություն:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը պայմանավորված է ՎԿ անձնակազմի ոչ համարժեք հմտությամբ կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացմամբ:

Գործառնական ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով Ընկերությունում կիրառվում են հետևյալ միջոցառումները՝

- փաստաթղթավորված են գրեթե բոլոր բիզնես գործընթացները,
- յուրաքանչյուր աշխատատեղ ունի իր նկարագրությունը,
- ներդրված է որոշումների կայացման կոլեգիալ սկզբունքը,
- գործում են հաստատված սահմանաչափեր,
- կիրառվում է երկու անձի սկզբունքը բոլոր գործառնականություններում,
- կիրառվում է դիվերսիֆիկացիայի սկզբունքը, ինչպես ակտիվների և վարկային պորտֆելի, այնպես էլ ֆինանսավորման ներգրավման մասով,
- աշխատակազմի համար պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ անհրաժեշտ հմտությունները կատարելագործելու նպատակով,
- գործընթացներում կիրառվող ծրագրային համակարգերը պարբերաբար թարմացվում և կատարելագործվում են, ինչը ավտոմատացման բարելավման և ռիսկի զսպման մեխանիզմ է,
- սահմանված կարգով և հաճախականությամբ կատարվում է ծրագրային համակարգերի տվյալների բազայի արխիվացում, ինչպես նաև վերոնշյալ բազայի կրկնօրինակի պահպանում ՎԿ տարածքից դուրս:

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության կառավարման համակարգը գործում է ՎԿ-ի կազմակերպչական կառուցվածքին համապատասխան: Դիտորդ խորհուրդը և գործադիր տնօրենը վերահսկում են ստեղծված ներքին կառավարման համակարգի արդյունավետությունը ղեկավարության և ներքին աուդիտի կողմից ներկայացված հաշվետվությունների միջոցով:

Դիտորդ խորհուրդը, գործադիր տնօրենը, ինչպես նաև կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից ներգրավված են ռիսկերի կառավարման գործընթացում: Այս տեսանկյունից գնահատվում են հետևյալ կոլեգիալ մարմինների դերերը՝ Դիտորդ խորհուրդ, Վարկային կոմիտե, Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտե (ALCO):

1. Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը հաշվետու է Դիտորդ խորհրդին: Խորհուրդը հաստատում է աուդիտի տարեկան պլանը, որը հիմնված է ռիսկերի վերլուծության հիման վրա: Ներքին աուդիտի կողմից իրականացվում է աուդիտի տարեկան պլանը և զեկուցվում է Խորհրդին:

2. Զաղաքականություններ և ընթացակարգեր

ՎԿ-ում գործում են քաղաքականություններ, կարգեր և ընթացակարգեր, որոնք հաստատվել են Ընդհանուր ժողովի, Դիտորդ Խորհրդի և գլխավոր գործադիր տնօրենի կողմից: Բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով հասանելի են անձնակազմի անդամներին:

ՎԿ խորհուրդը հաստատել է Ռիսկերի կառավարման քաղաքականություն և Ռիսկի ախորժակ, որի կատարման վերաբերյալ կիսամյակային կտրվածքով Խորհրդին ներկայացվում է հաշվետվություն:

3. Արտաքին աուդիտ

Դիտորդ խորհուրդի առաջարկով Ընդհանուր ժողովը հաստատում է արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության թեկնածությունը: 2023 թվականի հաշվետու տարվա համար արտաքին աուդիտը իրականացրել է "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ-ն:

ՎԿ հետագա զարգացման խնդիրները և նպատակները

Հաջորդ ժամանակաշրջանի համար ՎԿ զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են՝ ՎԿ-ն կշարունակի տրամադրել գյուղատնտեսական, ագրոբիզնես և ՓՄՁ վարկեր և լիզինգ: Ըստ կանխատեսումների, 2025 թ-ին ՎԿ վարկային պորտֆելը կաճի 2 մլրդ ՀՀ դրամով: Իր գործունեության ֆինանսավորման նպատակով ՎԿ-ն կօգտագործի ինչպես ներկայումս իրեն հասանելի միջոցները , այնպես էլ պարտատոմսերի թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: ՎԿ-ն նախատեսում է ներգրավել նոր ֆինանսական միջոցներ, ընդլայնելով ներդրողների շրջանակը, նոր՝ նպատակային ծրագրեր իրականացնելու համար: